

ԴՐՈՒԱԳ Բ

Ա. Գալուստ Գ Խաչակրաց, առաջնորդությամբ Փրետրիկայ Ա կայսեր.

Ոչ էր անտեղեակ Լեւոն՝ մեծի եւ ահաւոր զօրութեան նորոյ արեւելեան աշխարհակալին (Սալահէտտինի), եւ շատ իսկ հանճարեղ՝ առ ՚ի ճանաչել զչափ իւր փոքրագոյն, զոր ստուարացուցանելն ջանայր, եւ չէի էր հասեալ ՚ի նպատակն. այլ ոչ այնքան իւրով ինչ զինու եւ զօրութեամբ ակն ունէր ճողոպրել ՚ի հզօրէն, որքան յուսով նիզակակցութեան եւ օգնութեան այլոյ զօրաւորի, վեհագունին յարեւմտեայ իշխեցողս այնր ժամանակի, եւ անձնամատոյց գլուխ կացելոյ նորոյ (Գ) խաչակրութեան. այսինքն է կայսերն Ալամանաց՝ Փրետրիկայ Ա, *Շիկամօրուսն* կոչեցելոյ (*Barberousse*). այն որ յաւուրս երիտասարդութեանն երբեմն պատրաստեալ էր գնալ ընդ Բ Խաչակրաց՝ յազատութիւն Սրբոյ երկրին, եւ ոչ իսկ կասեալ ՚ի պատճառս մահուան հօր իւրոյ (1147) երթեալ էր անդր, այլ եւ ձեռնունայն դարձ արարեալ ընդ այլոց վեհագոյն առաջնորդաց արշաւանին:



207. Փրետրիկ Ա, Շիկամօրուսն, կայսր Ալամանաց.